ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյանի՝ Կատարի Պետություն (Դոհա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Տաթևիկ Խաչատրյան, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Կատարի Պետություն (Դոհա), 2025 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 20-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) մասնակից պետությունների 11-րդ համաժողովին (CoSP11), CoSP11-ին ընդառաջ մասնակից պետությունների կողմից ներկայացված բանաձևերի քննարկմանը, քվեարկությանը և ընդունմանը, Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված երկու հատուկ միջոցառումներին:

Քննարկված թեմաները՝ Կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողով, Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի (IRM) հաջորդ փուլ, Դոհայի հռչակագրի ընդունում, CoSP11-ին ընդառաջ մասնակից պետությունների կողմից ներկայացված մի շարք բանաձևերի ընդունում, «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն» և «Իրական շահառուների թափանցիկություն» խորագիրը կրող հատուկ միջոցառումներ»:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Կոնվենցիայի մասնակից պետությունների 11-րդ համաժողովի ընթացքում կայացած մի շարք բանաձևերի քննարկմանը, ներկայացրել է դիրքորոշում, մասնակցել է բանաձևերի ընդունմանը:

Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է Կոնվենցիայի II և V գլուխներով ամրագրված դրույթների շրջանակներում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները, Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի հաջորդ փուլի անցկացման վերաբերյալ (կառուցվածք, թեմատիկ հաջորդականություն, տեխնիկական աջակցութուն) նախկինում առաջ քաշած դիրքորոշումը, ինչն ավելի արդյունավետ կդարձնի գործընթացը:

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի երկրորդ փուլի վերաբերյալ Կատարի Պետության կողմից ներկայացված բանաձևի քննարկմանը, որին նախորդել էին ոչ պաշտոնական քննարկումներ՝ հեռավար ձևաչափով:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունը համահեղինակ է հանդիսացել Դոհայի հռչակագրի, Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզի երկրորդ փուլի վերաբերյալ բանաձևի, Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության վերաբերյալ բանաձևի, Երեխաների և երիտասարդների բարեվարքության ամրապնդումը կրթության միջոցով բանաձևի:

Տաթևիկ Խաչատրյանը՝ որպես Կոնվենցիայի շրջանակում ՀՀ կոնտակտային անձ, մասնակցել է Արդարադատության նախարարի երկկողմ հանդիպումներին Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարի և Ֆրանսիական հակակոռուպցիոն գործակալության ղեկավարի հետ:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման
և մոնիթորինգի վարչության
մոնիթորինգի բաժնի պետ՝

Տաթևիկ Խաչատրյան
24.12.2025թ.